Editorial Board:

Dadayan S.V. - Chairman of the Editorial Board, rector of ASU, Ph.D. in History, Professor
Balayan V.R. - Editor in Chief, vice-rector of ASU, Ph.D. in History, Associate Professor
Safaryan V.A. - Executive Secretary, Head of the History Department of ASU, Ph. D. in History, Associate Professor
Melqonyan A.A. - Director of the Institute of History of NAS in RA, Ph. D. in History, a member of NAS in RA
Hovhannisyan L. Sh. - Director of the Institute of Linguistics of NAS in RA, Ph. D. in Philology, member of NAS in RA
Petrosyan H. L - Head of the Cultural Studies Department of YSU, Ph. D. in History,
Musaelyan O.G. - Scientific Secretary of ASU, PhD in Philology, Professor
Sargsyan A. Y. - the Dean of the Philological Faculty of ASU, Ph. D. in Philolody, Associate Professor
Karapetyan S. - Chairman of the Social Organization for the Study of Armenian Architecture

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ուժն է ծնում իրավունք: Այս անարդար, բայց իրատեսորեն բանաձևված «ճշմարտությունը» երկրագնդի ժողովուրդների բոլոր ժամանակների ուղեկիցն է եղել: Եվ առավել շատ ճակատագիրը բարյացակամ է վերաբերվել նրանց նկատմամբ, ովքեր ավելի վաղ են ընկալել այս իրողությունը:

Արցախահայությունը, ճիշտ ընկալելով այս ճշմարտությունը, իր պատմական երկարատև կենսափորձի

վրա հենվելով, կենաց ու մահու պայքար է մղել արտաքին ու ներքին թշնամիների դեմ՝ հանուն սեփական հայրենիքի, պետականության, ժողովրդի ազատության ու անկախության: Այդ պայքարի բարձրակետը դարձավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծնունդը:

Ազգային պետականության գոյության պայմաններում Արցախում նոր հեռանկարներ է բացվում գիտության տարբեր ոլորտների, այդ թվում՝ հայագիտության զարգացման համար:

21-րդ դարին հատուկ նոր իրողությունների և տեղեկատվական բազում միջոցների գոյության պայմաններում տարբեր արժեհամակարգեր դավանող ազգերի միջև սուր պայքար է ծավալվել քաղաքականության, տնտեսության, մշակույթի, գիտության ասպարեզներում: Ավելին՝ Ադրբեջանի քաղաքական և գիտական շրջանակները, կեղծելով ու եղծելով իրողությունը, ամեն կերպ փորձում են սեփականացնել Հայոց Արևելից նահանգների պատմական ժառանգությունը:

Նման պայմաններում ԼՂՀ-ում հայագիտության զարգացումը հրատապ անհրաժեշտություն է դառնում:

Սույն հանդեսի նպատակն է իր շուրջը համախմբել ԼՂՀ, ՀՀ և սփյուռքի, ինչու չէ՝ նաև այլազգի հայագետներին՝ փորձելով լցնել այն պարապը, որ գոյացել է այս ասպարեզում:

«Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնեթենէ: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, եւ

տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աչոք քան կոյր մտօք»:

Մեծն պատմիչից՝ Եղիշեից լավ չես ասի:

Ճշմարտության բացահայտման՝ գիտնականի առաքելությանը հավատարիմ «Հայագիտական հանդեսը» կփորձի պատասխանել Կուր-արաքսյան հայկական միջագետքի և հարակից շրջանների պատմությանը, գրականությանը, բանահյուսությանը, ազգագրությանը, հնագիտությանը, մշակույթին առնչվող հարցերին՝ ցրելով այն մուժը, որ տասնամյակներ շարունակ նպատակային և մեթոդիկ կերպով ստեղծվել է այս ասպարեզում:

Հարգելի ընթերցող, անցյալի վերարժևորման, ներկայի և ապագայի արդյունավորման առումով մեզ հուզող բազում հարցերի պատասխանները կարելի է ստանալ սույն հանդեսի էջերում:

Վ. Բալայան